

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 փետրվարի 2005 թ.)

«Եվ ես ձեզ ասում եմ. անհրաժեշտ է մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք. որպեսզի երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ չնկոնեն ձեզ»:

(Դուկ. ԺԶ 9)

Մեծ Պահքը իր խորհրդածության, իր անդրադարձումի և բայց մանավանդ ինքնաբերական իր ընդհանուր մթնոլորտին մեջ երբեմն մեր ժողովրդի կողմն ճիշտ չի հասկցվիր, ճիշտ չի գնահատվիր, քիստ առիթներ են կարծես, երբ եկեղեցի կուգանք և խորհրդավոր այդ երգեցողության, սևով գոցված այս վարագույրներուն մեջ մենք ավելի կարավինք մտածելու, թե ինչ բաներն զրկված ենք, կամ մենք ինչ բաներն պետք է զրկենք մեզ անդրադարձումի այդ պահը արժեվորելու համար:

Ոչ, Մեծի Պահոց շրջանը քիստ, զրկանքի և կամ մեր ունեցածը չարժեվորելու, չգնահատելու այդ պահը չէ: Ընդհակառակը, հրավեր է Մեծ Պահքը մեզմե յուրաքանչյուրին համար նոր լիցքավորումներով, նոր հեռանկարներով, Աստուծո՞ւ մեզի տված շնորհքի նոր անդրադարձումով այնքան գործնական, այնպես լիցքավորվելու, որ մենք ավելի իմաստուն դառնանք այս աշխարհին վրա, մեր տեղը այստեղ՝ կյանքին մեջ ավելի լավ գնահատելու և հավիտենական կյանքի չափանիշներով շարժելու համար:

Այսօր մեր Տերը կուգե մեզմե յուրաքանչյուրը այնտեղ բերել, այս գիտակցության մեջ ամրապնդել, ինչպես կատարենք իր մտերիմներուն հետ մեկ գրույցի ընթացքին, երբ թերևս նոր պատահած դեպք մը առակի ձևով պարմենք իրենց և բոլորի ուշադրությունը հրավիրենք կարևոր այն դասին, կարևոր այն պատվիրանին, որուն համար մեզմե նաև մեր Եկեղեցին կուգե յուրե անդրադարձում այսօր, այս աղոթքի և պատարագի պահուն:

Միտու իր աշակերտներին ասաց. «Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տղևնու ունեք և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր Տիրոջ ունեցվածքը»: Տերը կանչեց նրան և ասաց. «Այս ինչ եմ լսում քո մասին, տուր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս տնտես լինել չես կարող»: Տնտեսը իր մտքում ասաց. *«Ի՛նչ պետք է անեմ, քանի որ իմ Տերը տնտեսությունս ինձնից վերցնում է: Հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ անաչում եմ: Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի երբ տնտեսությունիցս հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները»:* Եվ իր Տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մտքը կանչելով, առաջինին ասում է. *«Իմ Տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»:* Եվ սա ասում է. *«Հարյուր տակտիկ ձեռք»:* Եվ տնտեսը նրան ասում է. *«Ա՛ռ քո մուրհակը և նրա տիրոջ ու անմիջապես գրիր հիսուն»*, ասյա դարձյալ մյուսին ասում է. *«Դու ինչքա՞ն*

պարտք ունենալ»։ Եվ առ ասում է։ «Վեց հարյուր պարկ ցորեն»։ Տեղեւորը նրան ասաց. «Առ քո մուրհակը և ևարիդ ու գրիդ չորս հարյուր»։ Եվ Տեղը գովեց անհրապ րևերեսին, որովհետև հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամտիւ են, քան յույսի որդիները իրենց սերնդի մեջ։ Եվ ես ձեզ ասում եմ. «Անհրապ մամոռայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի երբ այն պակասի, հավիտենական հարկերի րակ ընդունեն ձեզ» (Լուկ. ԺԶ 1-9)։

Միտիւններ, նույն այս խոսքը մեր Տեղը այսօր մեզմե յուրաքանչյուրին կըսէ։ Շարք դժվար հարված մըն է Ս. Գրքին մեջ մեկնաբանության իմաստով։ Եթե պարզապէս մտածենք, որ Աստուծոյ մեզմե յուրաքանչյուրի իբրև րմբեսներ դրած է այս աշխարհին վրա, մեզի կյանքը րված է, մեզի շնորհքը րված է, որ լավ օգտագործենք զանոնք։ Բայց որովհետև մենք ընդհանրապէս նաև կցարաշահենք ամեն ինչ, օր մը եթե Աստուծոյ մեզ կանչեն և ըսեն. «Ի՞նչ կատարեցիր, ի՞նչ արիր քո կյանքովդ, քեզի րված շնորհքներդ ինչպէ՞ս օգտագործեցիր», անպայման մենք պիտի մնանք մեր կյանքին մեջ պարտական Աստուծոյ, որովհետև պիտի չկարենանք լիովին և ամբողջապէս Աստուծոյ բարի րմբեսները լինել։

Այնպիսի մարդու մը մասին կխոսի մեր Տեղը, որ մի օր բռնվեց սխալանքի մեջ, ձախողանքի մեջ, ի՞նչ պիտի ըլլա այդ մարդուն վիճակը։ Այլ րմբես չի, բան չի կարող անել, և մեզմե շարքեր որքան հայրնվում են այդ իրավիճակին մեջ, հուսահատվում են, սկսում են իրենց կյանքը ամբողջությամբ ուրիշ չափանիշներով առնել և դառնում են փորձանք այս աշխարհին վրա։ Ներքո մենք իբրև մարդիկ, կարող ենք կատարելապէս արդար լինել, կարող ենք կատարելապէս ամեն մարդուն հասնիլ։ Ոչ. անպայման մեզ մի բան կպակասի, մենք չենք կարող աշխարհի բոլոր կարիքներուն իրօք հասնել և դարմանել, անպայման մարդիկ մեզ պիտի մնողորեն, դատարկորի առջև անպայման մեզմե յուրաքանչյուրը հանցավոր դուրս պիտի գա։

Ուրեմն մեզմե յուրաքանչյուրը դատարարրված է պարիժը սրանալու, մեկը չկա մեզմե, որ պիտի վարձարովի, ճամփա չկա, որ մեզ կրնա րանիլ Աստուծոյ վարձարրությունը սրանալու։ Եթե այդ ճանապարհը չկա, մեզմե յուրաքանչյուրը պէտք է լքորեն մտածեն։ Այս կյանքը ոչինչ արժի, չարժի այս աշխարհին մեջ ոչինչ անել։ Սողոմոն իմաստունին մեզի ասած «Ունայնություն ունայնութեանց» կվերածվեն այս աշխարհը, պէտք է մի ճանապարհ լինի մեզ Աստուծոյ րանող, պէտք է մեզ Աստուծոյ այդ բարիքներին իսկական վայելքին հասցնող ճանապարհը լինի։ Եվ Նիսուս այդ ճանապարհի մասին խոսում է։

Այս աշխարհին մեջ եթե ամեն ձևի հնարամտություն մենք անենք, ժամանակավոր ձևով կօգտվենք այդ բոլորից։ Տեսաք, րմբեսը ինչ արեց, պարպերը զեղջեց բոլորին, որպեսզի մի օր մի մարդ իրեն մի բարիք անի կամ իրեն իր րան մեջ ընդունի։ Բայց Տեղը ինչ է ասում. «Այս է ձեր կյանքը, այս կուգեք, որ լինի ձեր վարձարրությունը, հապա հավիտենական կյանքը, րեսեք, ինչ է ասում»։ Այս անիրավ մամոռայեն դուք բարեկամներ շահեցեք ոչ թե որպեսզի այսրեղ իրենց րների մեջ ձեզ հյուրընկալեն, րեղ րան, հապա ասում է՝ հավիտենական հարկերի րակ դուք կարենաք հյուրասիրություն, ընդունելություն գրնել։

Այդ հավիտենական հարկ հասկացողությունը ամբողջ չափանիշները փոխում է, մեր կյանքի հիմնական օրենքներն է փոխում, և անոր համար այսօր մեր Եկեղեցին ալ մեր Տիրոջ պէս մեզ հրավիրում է հեպկյալ օրենքին կյանքին մեջ։ Կուգեք ձեր կյանքը, ձեր րադաղները հավիտենական հարկերու մեջ փոխանցել, կուգեք այդրեղ ընդունված մարդ լինել, կուգեք որ մի օր ձեր ձեռքը բռնեն Աստուծոյ հրեշրակները և ասեն. «Դուն Աստուծոյ սրը-

տին մեջ, հոգիին մեջ, իմ հարկերուն մեջ տեղ ունես, արի, Աստուծո բարի զավակ, այնպեղ բնակվիր»:

Քարեգործություն պիտի անես, բարեգործությունն է միակ ձևը, միակ օրենքը այս աշխարհին մեջ Աստուծո հետ կյանքը, Աստուծո տված բարիքները փոխադրելու մեր կյանքի մեջ հավիտենական կյանքի ուղին գտնելով հավիտենական կյանքի չափանիշներով: Ուրիշ կերպ չկա. ոմանք բարեգործությունը կապում են միայն փողի հետ, միայն թո ունեցվածքեղ լինելով: Այդ չէ բարեգործությունը, բարեգործությունը մարմնավորված է, բարեգործությունը կենսատոմ է, բարեգործությունը մեր ամբողջ տեսածը, մեր ամբողջ ունեցածը գնահատելու ու արժեկոշակելու կերպ է:

Քրիստոնեական հավատը մեզ կստվորեցնե. թո կյանքը թունը չէ, դու կյանքի տեսնես ես, դա պիտի արժեկոշակես, քեզի տրված շնորհները թունը չեն խորքի մեջ, դրանք բոլորը միջոց են: Աստված ինչ շնորհ քեզ տվել է՝ մարմն, հոգևոր, այդ բոլորը թունը չեն, Աստուծո ցանկացած պարգևներն են, նրանք միջոց են, նրանք ճամփա են մի տեղ հասնելու, ուրեմն բարեգործությունը մարմնավորված է, հավատի եղանակ է և ապրելակերպի, կենսատոմի հստակ օրենք է, այն ճամփան է, որ միայն Աստուծո կրթանի, և այն ճամփան է, որ Աստուծո աշխարհը կփոխադրես այստեղ:

Միակ ոճն է գործելու, աշխատելու, որ Աստուծո օրենք կրեմի և կհաստատվի աշխարհի մեջ, միակ ճամփան է, որ Աստուծո աշխարհը կրեմի և կդարձնես մեր բոլորիս աշխարհը, պարզվիրանները ամբողջ գործածվելի՝ սիրելի և հարգելի իրականությանը կվերածվի, Աստուծո բուն իսկ ստեղծած մարդու պատկերը և կորսված դրախտը վերականգնելու միակ ճամփան գործնականորեն մեզ բերող բարեգործությունն է:

Ուրեմն, սիրելիներ մեր, քրիստոնեության մասին երբեմն օտար կրոնքի մարդիկ գործվոր քննադատություն մը կընեն, կըսեն, որ դուք շատ բարի բաներու մասին կխոսեք, դուք շատ լավ օրենքներ ունիք, դուք սքանչելի Աստված մը ունիք, դուք փառավոր Եկեղեցի ունիք, ձեր բոլոր քարոզները երբ կլսենք մենք, կգոյնեցնվինք, կքաջալերվինք, բայց դուք մեկ թերություն ունեք, ձեր ասածը, ձեր հավատքը չեք գործածեր, չեք օգտագործեր, չեք կատարեր, այնինչ ուրիշ կրոններու մեջ դիտելի երևույթը հստակապես այն է, որ Աստուծո ամենակազազայն պարզվիրանը մարդիկ ամեն օր կգործադրեն, ամեն օր կկատարեն, աղոր համար ամեն օր իրենց կյանքը կփոխվի:

Մենք միայն կիրակի օրերը քրիստոնեյա ենք, մենք միայն կիրակի օրերը Աստուծո ճամփաները կփնտրենք, մնացած օրերը աշխարհին են, աշխարհին կուրանք, անոր համար այս Մեծ Պահքին մեր Եկեղեցու պարզվիրանն է. կուգեք Աստուծո իսկական հարազատ, բարի զավակները, տեսնենք դառնալ, մեկ ճամփա կա իր աշխարհը այստեղ բերել, բարեգործություն անել, բարիք անել և այդ բարեգործության մեջ հավիտենական հարկերու տակ Աստուծո կողմն ընդունելություն, քաջալերանք, օրհնանք և սեր գտնելու: Այդպես է իսկական ապաշխարությունը, վերադարձը Աստուծո օրենքին և մեզի համար սնունդ, կյանքի ձև և կյանքի չափորոշիչ օրենք ճանչնալ Աստուծո խոսքը, Աստուծո պարզվիրանը և Աստուծո այն աշխարհը, որին մեջ այնքան խաղաղ, այնքան հանգիստ և այնքան սիրով շրջապատված և այնքան վերականգնումի հույսով գորացած կզգանք:

Աստուծո շնորհը, սերը, խաղաղությունը բոլորիս, բոլոր ապաշխարողներուն և այդ ապաշխարանքը ընդունելի լինի Աստուծո մեզ բոլորի համար. ամեն: